ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԻԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «Վ 1Պ-ՄԱՊՁԲ -20/17-2»

«10» հունիսի 2020 թ.

ք.Վանաձոր

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրենի Վ. Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Հրանտ Ամիրբեկյան, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցինսույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1Գնորդն իրավունքունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա)պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք,ապա՝

ա)պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը, իսկ եթե ապրանքի համար վճարվել է,ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց,

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա)ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները,եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր,սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու՝համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Մի ակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի),եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող
խարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից
ավելի,
2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին
անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ հշ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարումը թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում՝ տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 375390 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

որդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգհարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի
պավորի համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանի որոշում կայացնել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Գնորդը չի կրում պայմանագրի վնասների կամ բաց թողնված օգուտի Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները նայած ավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկությամբ առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ՝ բացառությամբ՝ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2, N 3** և **N 3.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 , < Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ	ԱՁ Հրանտ Ամիրբեկյան ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 4 4/1 ՀՎՀՀ 85703198
Հ/Հ 247170009663 ՀՎՀՀ 06907013 Տնօրեն՝ Վ.Ս.Օհանյան _____ Կ.Տ ստորագրություն	_____ /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
«10» հունիսի 2020թ. կնքված
N«Վ 1Պ-ՄԱՊԶԲ -20/17-2»ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Ապրանքի							մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը *	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքայինները **	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը ***
1	39831243	Լվացքի փոշի 0,450 գ <Պերսիլ>	կգ	80	649	51920	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	80	Հունիս10-դեկտեմբեր 25
2	39831242	Լվացքի փոշի 300 գ <Day >	կգ	30	567	17010	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	30	Հունիս10-դեկտեմբեր 25
3	39831245	Օճառ ձեռքի /հեղուկ/ Капля чистоты / 5 լ-g/	լիտր	100	310	31000	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	100	Հունիս10-դեկտեմբեր 25
4	39831250	Լողակ 250 մլ. /պլաստմասե 22ով/ Миленка	լիտր	10	680	6800	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	10	Հունիս10-դեկտեմբեր 25
5	39831100	Ժավել 1 լ Капля чистоты	լիտր	50	250	12500	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	50	Հունիս10-դեկտեմբեր 25
6	39221410	Ավել տնտեսական	հատ	50	1000	50000	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	50	Հունիս10-դեկտեմբեր 25

7	33761100	Թուղթ զուգարանի	հատ	500	120	60000	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	500	Հունի դեկտեմբեր
8	39831283	Հատակի մաքրման լաթ	մետր	40	470	18800	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	40	Հունիս10-դեկտեմբեր 25
9	39612600	Ռաքշա	հատ	40	310	12400	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	40	Հունիս10-դեկտեմբեր 25
10	44511220	Կռոտ 1 լ	հատ	10	580	5800	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	10	Հունիս10-դեկտեմբեր 25
11	39831241	Օճառ ձեռքի	հատ	30	75	2250	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	30	Հունիս10-դեկտեմբեր 25
12	39831240	Ափսե լվալու հեղուկ / 5 լ-g/	լիտր	20	1400	28000	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	20	Հունիս10-դեկտեմբեր 25
13	39221490	Սպունգ	հատ	39	30	1170	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	39	Հունիս10-դեկտեմբեր 25
14	39831282	Փոշու շոր/միկրոֆիբրա/	հատ	20	360	7200	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	20	Հունիս10-դեկտեմբեր 25
15	39831280	Ապակի մաքրելու հեղուկ/Мечта/	հատ	25	280	7000	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	25	Հունիս10-դեկտեմբեր 25
16	18141100	Ռետինե ձեռնոց	զույգ	50	170	8500	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	50	Հունիս10-դեկտեմբեր 25
17	39831100	Ժավել/ավտոմատ լվացքի մեքենաների /	լիտր	15	226	3390	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	15	Հունիս10-դեկտեմբեր 25

		Капля чистоты 5 լ-g							
18	39811100	Օդի թարմացուցիչ /Alpen/	հատ	20	320	6400	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	20	Հունիս10-դեկտեմբեր 25
19	39221170	Թաս պլաստմասե /կապույտ/ 10 լ	հատ	5	460	2300	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	5	Հունիս10-դեկտեմբեր 25
20	39221270	Դույլ պլաստմասե 10 լ	հատ	10	450	4500	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	10	Հունիս10-դեկտեմբեր 25
21	44521230	Լվացքի ամրակ	հատ	48	25	1200	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	48	Հունիս10-դեկտեմբեր 25
22	19641000	Աղբի տոպրակ 60 լ	հատ	35	240	8400	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	35	Հունիս10-դեկտեմբեր 25
23	19641000	Աղբի տոպրակ 120 լ	հատ	35	420	14700	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	35	Հունիս10-դեկտեմբեր 25
24	39221420	Պոչով խոզանակ փոշու համար	հատ	5	900	4500	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	5	Հունիս10-դեկտեմբեր 25
25	39221480	Զուգարանի խոզանակ	հատ	5	630	3150	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	5	Հունիս10-դեկտեմբեր 25
26	39531800	Խալի փոքր	հատ	5	1300	6500	ք. Վանաձոր, Մյասնիկյան 17	5	Հունիս10-դեկտեմբեր 25

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,
< Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ

ՀՎՀՀ 247170009663

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Հրանտ Ամիրբեկյան
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 4 4/1
ՀՎՀՀ 85703198

ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Վ.Ս.Օհանյան
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ուն

Հավելված N 1
«10» հունիսի 2020թ. կնքված
N «ՎՊ-ՄԱՊՁԲ-20/17-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39831243	Լվացքի փոշի 0,450 գ <Պերսիլ>	%	%	%	%	%	%	8653	17307	25960	34613	43267	51920	51920
2	39831242	Լվացքի փոշի 300 գ <Day >	%	%	%	%	%	%	2835	5670	8505	11340	14175	17010	17010

3	39831245	Օճառ ձեռքի /հեղուկ/ Капля чистоты / 5 լ-g/	%	%	%	%	%	%	5167	10333	15500	20667	25833	31000	31000
4	39831250	Լողակ 250 մլ. /պլաստմասե 22ով/ Миленка	%	%	%	%	%	%	1133	2267	3400	4533	5667	6800	6800
5	39831100	Ժավել 1 լ Капля чистоты	%	%	%	%	%	%	2083	4167	6250	8333	10417	12500	12500
6	39221410	Ավել տնտեսական	%	%	%	%	%	%	8333	16667	25000	33333	41667	50000	50000
7	33761100	Թուղթ զուգարանի	%	%	%	%	%	%	10000	20000	30000	40000	50000	60000	60000
8	39831283	Հատակի մաքրման լաթ	%	%	%	%	%	%	3133	6267	9400	12533	15667	18800	18800
9	39612600	Ռաքշա	%	%	%	%	%	%	2067	4133	6200	8267	10333	12400	12400
10	44511220	Կռոտ 1 լ	%	%	%	%	%	%	967	1933	2900	3867	4833	5800	5800
11	39831241	Օճառ ձեռքի	%	%	%	%	%	%	375	750	1125	1500	1875	2250	2250

12	39831240	Ափսե լվալու հեղուկ / 5 լ-g/	%	%	%	%	%	%	4667	9333	14000	18667	23333	28000	28000
13	39221490	Սպունգ	%	%	%	%	%	%	195	390	585	780	975	1170	1170
14	39831282	Փոշու շոր/միկրոֆիբրա/	%	%	%	%	%	%	1200	2400	3600	4800	6000	7200	7200
15	39831280	Ապակի մաքրելու հեղուկ/Мечта/	%	%	%	%	%	%	1167	2333	3500	4667	5833	7000	7000
16	18141100	Ռետինե ձեռնոց	%	%	%	%	%	%	1417	2833	4250	5667	7083	8500	8500
17	39831100	Ժավել/ավտոմատ լվացքի մեքենաների / Капля чистоты 5 լ-	%	%	%	%	%	%	565	1130	1695	2260	2825	3390	3390
18	39811100	Օդի թարմացուցիչ /Alpen/	%	%	%	%	%	%	1067	2133	3200	4267	5333	6400	6400
19	39221170	Թաս պլաստմասե /կապույտ/ 10 լ	%	%	%	%	%	%	383	767	1150	1533	1917	2300	2300
20	39221270	Դույլ պլաստմասե 10 լ	%	%	%	%	%	%	750	1500	2250	3000	3750	4500	4500
21	44521230	Լվացքի ամրակ	%	%	%	%	%	%	200	400	600	800	1000	1200	1200

22	19641000	Աղբի տոպրակ 60 լ	%	%	%	%	%	%	1400	2800	4200	5600	7000	8400	8400
23	19641000	Աղբի տոպրակ 120 լ	%	%	%	%	%	%	2450	4900	7350	9800	12250	14700	14700
24	39221420	Պոչով խոզանակ փոշու համար	%	%	%	%	%	%	750	1500	2250	3000	3750	4500	4500
25	39221480	Զուգարանի խոզանակ	%	%	%	%	%	%	525	1050	1575	2100	2625	3150	3150
26	39531800	Խալի փոքր	%	%	%	%	%	%	1083	2167	3250	4333	5417	6500	6500

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,
< Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ

ՀՎՀՀ 247170009663
ՀԿՀՀ 06907013
Տնօրեն՝ Վ.Ս.Օհանյան

Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Հրանտ Ամիրբեկյան
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 4 4/1
ՀՎՀՀ 85703198

/ստորագրություն/
Կ.Տ